



Ազդարարության Trumpet's Sound **փող**

56-րդ ՏԱՐԻ, ԱՐԱՏՐԱԼԻԱ
ՄԱՅԻՍ - ՅՈՒՆԻՍ 2025



«ԱԶԳԱՐԱՐՈՒԹԵՆ ՓՈՎ»
երկամսյա հոգեւոր թերթ

Պատասխանատու խմբագիր՝
հովիւ Հրաչ Գույունեան

ACM AUSTRALIA
PO BOX 1593,
CHATSWOOD NSW 2057
EMAIL: hkiujian@acmaust.org
URL: www.acmaust.org



Բովանդակություն

Հագե՛ք 3
Հովիւ՝ Հրաչ Գույունեան

Քրիստոնեաները եւ
համակերպությունը..... 4
Ռէքս Տիրլաւ

Ի՞նչ նշանակութիւն ունի յարութիւնը
ինծի համար (2) 7
Տոն Սթորմը

Իր բերանը բանալով կը սորվեցներ (3) . 11
Նելլ Պոլքման

Նամակի մը զօրութիւնը..... 13
Քաղուածք

Լուրեր Վրաստանէն 14
Տօթթ.՝ Դանիէլ Ելմս

Կազմի նկարը՝ Կատարանտի, © 2020
Դանիէլ Թադեոսեան

Աղօթքի եւ փառաբանության նիւթեր

- Մեր միսիոներական խումբը ապահով վերադարձաւ տուն՝ Հայաստան, Լիբանան եւ Կիպրոս այցելելէ ետք:
- Երեք օրեայ աւետարանչական ծրագիր մը ունեցանք գիւղի մը հանրային դպրոցին մէջ: 60 մանուկներ մասնակցեցան: Աղօթեցէ՛ք՝ որպէսզի ցանուած սերմը արդիւնք բերէ:
- Մեր յաջորդ միսիոներական խումբը Հայաստանի մէջ պիտի գտնուի Սեպտեմբերին: Աղօթեցէ՛ք խաղաղութեան համար եւ յատկապէս մեզ միացած 7 քարոզիչներուն համար:
- 27-րդ բեռնարկող ճանապարհին Է դէպի Հայաստան եւ Աստուծոյ կամքով՝ պիտի հասնի Օգոստոսին:

Շնորհակալ ենք ձեր աղօթքներուն եւ աջակցութեան համար:
Ամէն բանէ վեր՝ գոհութիւն տուէք
Հօրը:

Հագե՛ք

Մարդիկ իրենց եկամուտի զգալի մասը կը ծախսեն հագուստի վրայ: Նորաձեւութիւնը դարձած է կարեւոր, մասնաւորապէս ապրանքանիշերու անունները: Հարցը այն է՝ արդեօք Երկինքին մէջ հագուստ պիտի ըլլա՞յ, եւ ի՞նչ ապրանքանիշեր պիտի հագուինք:

Այնտեղ պիտի ըլլան ընդամենը վեց «ապրանքանիշ»՝ գուրը, ողորմութիւնը, քաղցրութիւնը, խոնարհութիւնը, հեգութիւնը, համբերութիւնը եւ սէրը:

«Ուստի Աստուծոյ ընտրեալ սուրբերու եւ սիրելիներու պէս ձեր վրայ հագե՛ք գուրը, ողորմութիւնը եւ քաղցրութիւնը, խոնարհութիւնը, հեգութիւնը, երկայնամտութիւնը» (Կող. 3:12):

Մեզմէ ոմանք առանց հագուստի պիտի մնան, եւ որքա՛ն նուաստացուցիչ կրնայ ըլլալ այդ, սակայն Աստուած կ'ուզէ, որ մենք հագուած ըլլանք...

Գուրը: Յիսուս պատմեց Բարի սամարացիի առակը (Դուկ. 10:25-37), ուր սամարացին օգնեց վիրաւոր մարդուն, երբ ուրիշներ անտարբեր կերպով անցան անոր կողքով: Սա ցոյց կուտայ, որ գուրը կը գերազանցէ ընկերային եւ մշակութային սահմանները:

Ողորմութիւնը: Դաւիթ բարութիւն ցոյց տուաւ Յովնաթանի որդիին՝ Սաուլը թագաւորին թոռին՝ Մեմփիբոսթէին: Թէեւ ան անդամալոյծ էր եւ գողտրիկ գիւղի մը մէջ կ'ապրէր, Դաւիթ փնտռեց զինք, վերադարձուց անոր ընտանեկան հողերը՝ ապահովելով անոր ապրուստը: Ապա հրաւիրեց զինք իր սեղանին շուրջը նստելու՝ իր զաւակներէն մէկուն պէս: Այս ողորմութեան արարքը հիմնուած էր Դաւիթի եւ Յովնաթանի ուխտին վրայ եւ կը ցուցադրէ Դաւիթի հաւատարմութիւնն ու գուրը:

Խոնարհութիւնը: Յովհաննէս Մկրտիչը ընդունեց, թէ իր առաքելութիւնը Յիսուսին ճամբայ պատրաստելն էր. ան ըսաւ. *«Անիկա պէտք է որ մեծնայ, քայց եւ պզտիկնամ»* (Յովհ. 3:30):

Հեզույթիւնը: Գիրքը կը յիշէ բազմաթիւ անձեր, որոնք հեզույթեան օրինակներ եղած են: Իսկ գերագոյն օրինակը՝ Ինքը Յիսուս Քրիստոսն էր, որ ըսաւ. «*Հեզ եմ ու սրտով խոնարհ»* (Մատթ. 11:29):

Համբերութիւնը: Յորը սաստիկ տառապեցաւ, բայց Աստուծոյ հաւատարիմ մնաց:

Սէրը: «*Եւ այս բոլոր բաներուն վրայ սէրը հազէք, որ կատարելութեան կսպն է»* (Կող. 3:14):

Որո՞ւ պէտք է սիրենք: Ամերիկացիներո՞ւն, հրեաներո՞ւն, պարսիկներո՞ւն, պաղեստինցիներո՞ւն... Պէտք է սիրենք բոլորին, որովհետեւ այս է մեր պատուիրանը: Եւ քանի որ վախճանը այնքան մօտ է, եկէ՛ք հազուի՛նք այս առաքինութիւնները:

Հ. Գ.

Քրիստոնեաները եւ համակերպութիւնը

Վերջերս, առաւօտեան պաշտամունքի ժամանակ պատահած պրզ-տիկ դէպք մը զիս խորհելու առիթ տուաւ: Երկրպագութեան ընթացքին հաւատացեալ մը խնդրեց, որ մեր նստարաններուն վրայ նըստած մնանք որոշ օրհներգ մը երգելու ժամանակ: Առաջին շարքին մէջ մի քանի հոգի չլսեցին այդ խնդրանքը եւ կանգնեցան երգելու՝ փոխանակ նստած մնալու: Կը խորհիմ, թէ անոնք տեղեակ չէին, որ իրենց ետեւը գտնուողները բոլորն ալ նստած մնացած էին: Արդիւնքին, իրենց ետեւի շարքն ալ ոտքի կանգնեց, ապա յաջորդը, եւ այսպէս «Մեր սիրբական ալիքը» շարունակուեցաւ մինչեւ որ բոլորը ոտքի էին՝ հակառակ նստած մնալու խնդրանքին: Հաւատացած եմ, որ նման բան եղած է նաեւ ձեր եկեղեցիին մէջ:

Հետաքրքրական այն էր, որ մինչ միայն մէկ կամ երկու հոգի ոտքի էին, ես շատ ճնշում չգգացի վրաս, որ ես ալ պէտք է ոտքի կանգնիմ: Բայց երբ ոտքի կանգնողներուն թիւը աճեցաւ, անոնց միանալու ճնշումը զգալիօրէն աւելի մեծցաւ: Եկաւ պահ մը, երբ այն ճնշումը այն-

քան սաստկացաւ, որ կանգնիլը «անհրաժեշտութիւն» դարձաւ: Վերջապէս, ես ալ չդիմացայ ու ոտքի կանգնեցայ:

Եթէ մէկը հարցնէր, թէ ինչո՞ւ կանգնեցայ երբ յստակ կերպով խընդրուած էր նստած մնալ, հաւանաբար պիտի պատասխանէի ըսելով, թէ չէի ուզեր յիմարի պէս երեւնալ՝ ըլլալով միակ անձը որ նստած է՝ մինչ բոլորը ոտքի կանգնած են: Պարզ իրականութիւնն այն էր, որ ես կ'ուզէի ընդունուած ըլլալ: Իսկ միւսներէն տարբերուիլը աչքի իյնալու լաւագոյն միջոցը չէր: Վերջապէս «ի՞նչ պիտի մտածեն մարդիկ» հարցումը յաղթեց «ի՞նչ է ճիշտը» հարցումին:

Ի հարկէ, ես հիմա աւելի մեծ հարց մը կը բարձրացնեմ այս փոքր եկեղեցական դէպքով, սակայն սա ցոյց կուտայ կարելորդ իրականութիւն մը. մեր կեանքին մէջ կան ուժեր, որոնք կը ձեւաւորեն մեր մտածողութիւնը ու ընտրութիւնները:

Այս իրականութենէն կը բխին երեք սկզբունքներ՝

- Սխալը, որ քիչեր կ'ընեն, սխալ կը թուի:
- Սխալը, որ շատերը կ'ընեն, ճիշտ կը թուի:
- Երբ բաւարար թիւով մարդիկ սխալ բան մը ընեն, այդ սխալը «նորմալ» կը դառնայ եւ գրեթէ անկասելի փափաք մը կը ստեղծուի անոնց միանալու համար:

Ինչո՞ւ է այդպէս: Այս սկզբունքներուն հետեւանքները հսկայական են: Ինչպէ՞ս կրնանք ազատիլ այս ուժէն, որ մեզ կը ստիպէ միանալ ամբողջին՝ նոյնիսկ երբ գիտենք, որ անոնք սխալ են: Մեր պատասխանը այս հարցումին պիտի սահմանէ մեզ որպէս քրիստոնեաներ՝ ամբողջ աշխարհին մէջ:

Մենք կը վախճանք տարբերուիլ, որովհետեւ կը փափաքինք այս աշխարհի կողմէ ընդունուած ու արժեւորուած ըլլալ: Երբ մարդկանց գովասանքը կամ ընդունելութիւնը կը փնտռենք եւ կը թողունք, որ անոնք մեր արժէքը սահմանեն, ապա անոնք մեծ իշխանութիւն կ'ունենան մեր վրայ: Անոնք կը գովաբանեն ու կը սիրեն մեզ միայն եթէ իրենց պէս ապրինք: Եթէ թոյլ տանք, ապա անոնք կրնան ղեկավարել մեզ այնքան, որքան թմրանիւթ վաճառող մը իր կախեալ յաճախորդին վրայ իշխանութիւն ունի: Մենք կրնանք կախեալ ըլլալ ընդունուած ըլլալու

զգացումէն՝ պատրաստ ըլլալով ամէն բան զոհել այդ նպատակին համար:

Եթէ սիրոյ եւ ընդունման ուրիշ, ասելի վստահելի աղբիւր մը չենք գտներ, ապա աշխարհի մարդիկ պիտի շարունակեն մեր կեանքը դեկավարել, մեր արժէքը տալ կամ առնել ըստ իրենց կամքին:

Քրիստոս այս հարցին էութիւնը շօշափեց, երբ հրեաներուն ըսաւ. *«Դուք ինչպէ՞ս կրնաք հաւատալ, երբ իրարմէ փառք կ'ակնկալէք եւ այն փառքը որ Աստուծոյն է՝ չէք փնտռեր»* (Յովհ. 5:44):

Որպէսզի ազատինք ուրիշներու մեր վրայ ունեցած այս իշխանութենէն, մեր արժէքն ու ընդունելութիւնը պէտք է գտնենք Աստուծոյ մէջ: Երբ կը զգանք, որ Աստուած մեզ կը սիրէ եւ մեզ կը գնահատէ, աշխարհի մարդկանց կողմէ ճանչցուելու կարիքը կը նուազի: Անոնց ունեցած իշխանութիւնը կը թուլանայ, որովհետեւ այլեւս չենք ձգտիր այն բաներուն, որոնք անոնք կրնան մեզի տալ:

Մենք կը դադրինք կախեալ ըլլալ եւ կը սկսինք ճաշակել ազատ որոշումներու ուրախութիւնը: Հրեաները միմիանց գովասանքէն կախեալ էին, եւ անկարող էին ճշմարտապէս Քրիստոսը տեսնել: Եթէ անոնք Աստուծմէ գովասանք փնտռէին՝ ազատուած կ'ըլլային մարդկանց իշխանութենէն, եւ կրնային ճանչնալ Քրիստոսը եւ ապրիլ ճշմարիտ ազատ կեանք մը՝ ի շինութիւն իրենց իսկ հաւատքին: Այս առիթը մենք ունինք այսօր:

Ռէքս Տիրլաւ



«Իսկ եթէ Յիսուսը մեռելներէն յարուցանողին Հոգին ձեր մէջ բնակած է, ուրեմն անիկա որ Քրիստոսը մեռելներէն յարուցանեց, պիտի կենդանացնէ ձեր մահկանացու մարմիններն ալ իր Հոգիովը որ ձեր մէջ կը բնակի: Ապա ուրեմն, եղբայրներ, պարտական ենք, ո՛չ թէ մարմնին՝ մարմնաւորապէս ապրելու համար»:

Հռովմ. 8:11-12

Ի՞նչ նշանակություն ունի յարույթիւնը ինծի համար (2)

Յովհ. 20-րդ գլուխ

Նախորդ յօդուածին մէջ խօսեցանք Բերանիայէն մէկ ընտանիքի եւ Էմմաուսի ճամբուն վրայ Տէր Յիսուսի երկու աշակերտներուն հետ հանդիպումին մասին: Այս բաժինին մէջ պիտի խօսինք անոնց մասին, որոնց անունները գրուած են Յովհաննէսի Աւետարանին մէջ:

Մարիամ Մագդաղենացի

Մտովի վերադառնանք յարութեան առաւօտը եւ դիտարկենք պատահարները այն աշակերտին աչքերով, որուն Յիսուս կը սիրէր: Պատմութիւնը, զոր ան կը փոխանցէ Յովհաննէս 20-րդ գլուխին մէջ, կը սկսի Մարիամ Մագդաղենացիի գերեզման այցելութեամբ՝ մինչեւ աշակերտներուն քով երթալը:

Ուշագրաւ է, թէ Յովհաննէս ինչպէս կը նկարագրէ պատահարը: Մտածեցէ՛ք այն բոլոր մանրամասնութիւններուն մասին, որոնք ան բաց կը թողէ Մարիամ Մագդաղենացիի մասին: Օրինակ՝ եօթը դէւերէ ազատումը, Յիսուսին հետեւիլը, շաբաթ օրուայ մայրամուտէն ետք խօնկեր գնելը, Տիրոջ մարմինը օծելու նպատակով խնկեր ու իւղեր պատրաստելը, Յիսուսի գերեզման գացող կիներու խումբին մաս կազմելը, բաց գերեզմանին մօտ հրեշտակներ տեսնելը... Յովհաննէս այս բոլորը բաց կը թողէ, որովհետեւ կ'ուզէ, որ մենք մտածենք Մարիամին վրայ յարութեան ունեցած ազդեցութեան մասին:

Մարիամ չհասկցաւ հրեշտակներուն պատգամին իմաստը՝ որ Տէրը յարութիւն առած է: Ան չհաւատաց, այլ մտածեց, թէ ինչ որ մէկը վերցուցած է Անոր մարմինը: Այս պատճառով ալ գնաց Պետրոսին եւ Յովհաննէսին մօտ՝ ըսելով, թէ ինչ ոչ մէկը Տիրոջ մարմինը վերցուցած է: Ան չ'ըսաւ, թէ մարմինը վերցուցած են, այլ՝ թէ Տիրոջը վերցուցած են: Տէրը զինք ազատած էր եօթը դէւերէ, ուստի երբեք չէր կրնար զինք նկատել իբրեւ մարմին մը: Ան Իր Տէրն էր:

Մարիամ վազեց Պետրոսին եւ Յովհաննէսին տեսնելու: Ենթադրաբար, ան հետ վազեց գերեզման, որովհետեւ հոն էր երբ Պետրոսն ու Յովհաննէս հեռացան այնտեղէն: Պատկերացուցէ՛ք իր վիշտը: Ա՛ն, որ այնքան մեծ բան ըրած էր իր համար, այժմ անհետացած էր: Ան ամբողջովին ապշած ու անմխիթար էր: Ո՛ւր էր Տէրը: Ան նայեց գերեզմանին մէջ եւ տեսաւ երկու հրեշտակ՝ որոնք քնքշութեամբ հարցունցին, թէ ինչո՞ւ կուլար: Իր պատասխանը կը հաստատէր, թէ իր համար Յիսուսը միշտ Տէր էր. *«Տէրը գերեզմանէն վերցուցած են»*:

Երբ շրջեցաւ, տեսաւ մէկը: Հարցուց, թէ ինչո՞ւ կուլար եւ որո՞ւ կը փնտռէր: Շփոթուած եւ կարծելով, թէ պարտիզպանն է, ըսաւ անոր. *«Տէ՛ր, եթէ դուն վերցուցիր զանհկա, ըսէ՛ ինձի, ո՞ւր դրիր զայն, որպէս զի ես զանհկա առնեմ»* (Յովհ. 20:15): Տէրը արտասանեց միայն մէկ բառ՝ *«Մարիա՛մ»*: Ան իսկոյն ճանչցաւ, որ Ինքն է՝ Տէրը, ու որ կենդանի է:

Ի՞նչ ազդեցութիւն ունեցաւ յարութիւնը Մարիամ Մագդաղենացիի վրայ: Իր տրտմութիւնը ուրախութեան վերածուեցաւ: Ուրախութեամբ վերադարձաւ Պետրոսին եւ Յովհաննէսին մօտ՝ վկայելու այն ճշմարտութիւնը, որ Տէրը կենդանի է:

Պետրոսն ու Յովհաննէսը

Պետրոսն ու Յովհաննէսը գերեզման վազեցին: Յովհաննէսի գրած բոլոր մանրամասնութիւնները ցոյց կու տան, թէ որքան խոր տպաւորութիւն գործեց յարութիւնը իր վրայ: Ան կը նշէ՝ թէ ինք աւելի արագ վազեց եւ առաջինը հասաւ գերեզման: Այս միանգամայն աննշան մանրամասնութիւնը կը հաստատէ իր վկայութեան ճշմարտացիութիւնը: Ուրիշ ո՞վ, բացի ականատեսէն, կրնայ ըսել, որ ինք աւելի արագ վազելով անցաւ իր ընկերոջը:

Յովհաննէս՝ Պետրոսէն առաջ գերեզման հասնելով, ուշադիր նայեցաւ: Ծռելով նայեցաւ ու տեսաւ որ կտաւները հոն կը կենային. ու վարշամակը, որ անոր գլուխն էր՝ միւս կտաւներուն հետ չէր, հապաժալուած մէկ կողմը դրուած էր: Սովորական պայմաններու մէջ, եթէ մարմինը գողցուած ըլլար, գերեզմանի պարագաներն ալ պիտի գողցրուէին: Իսկ եթէ չուզէին զանոնք, պիտի նետէին գետին: Բայց այս պարագաները այնպէս դրուած էին, կարծես Յիսուս ուղղակի դուրս ելած էր անոնցմէ՝ առանց խանգարելու: Յովհաննէսը կը գրէ, թէ տե-

սաւ ու հաւատաց: Կը շարունակէ ըսելով. *«Վասն զի դեռ գրուածը չէին գիտեր, թէ «Պէտք է որ անհկա մեռելներէն յարուրթին առնէ»»:*

Ի՞նչ ազդեցութիւն ունեցաւ յարութիւնը Յովհաննէսի վրայ: Իր հաւատքը խորացաւ: Ան սկսաւ աւելի լաւ հասկնալ սուրբգրութիւնը:

Աշակերտները

Յարութեան օրուան իրիկունը աշակերտները միասին հաւաքուած էին փակ սենեակի մէջ: Թէեւ Յովհաննէսը հաւատացած էր եւ գիտէր, թէ Տէրը Պետրոսին յայտնուած էր, սակայն տղամարդիկ ու կանայք վախցած էին: Տէրը եկաւ ու մտաւ փակ սենեակին մէջ եւ ըսաւ. *«Խաղաղութիւն ձեզի»:* Երբ անոնց վախը անցաւ, ուրախացան՝ տեսնելով Տէրը:

Ի՞նչ ազդեցութիւն ունեցաւ յարութիւնը աշակերտներուն վրայ: Տրամութեան փոխարէն՝ ուրախութիւն: Սակայն Տէրը նաեւ զանոնք դրկեց, ըսելով, թէ ինչպէս Հայրը Իրեն դրկած էր, այնպէս ալ Ան զանոնք կը դրկէր: Յարութիւնը նաեւ պարտականութիւն էր. աշակերտները ունէին առաքելութիւն՝ ըլլալ Տիրոջ վկաները: Անոնք այլեւս վախցած մարդիկ չեն, որոնք կը պահուէին հրեաներուն երեսէն: Հոգեգալուստին օրը, անոնք համարձակօրէն հռչակեցին յարութեան լուրը. *«Աստուած զանհկա Տէր ալ ըրաւ՝ Օծեա՛լ ալ, այն Յիսուսը, որ դուք խաչեցիք»* (Գործք 2:36):

Թովմասը

Յովհաննէսը կը յիշատակէ նաեւ Թովմասին: Ի՞նչ նշանակութիւն ունեցաւ յարութիւնը իր համար: Թովմաս ներկայ չէր, երբ Յիսուս յայտնուեցաւ առաջին անգամ: Աշակերտները յաջորդ օրերուն ըսին անոր՝ որ Տէրը կենդանի է: Բայց ան մերժեց հաւատալ, ըսելով. *«Եթէ իր ձեռքերուն վրայ բեռեռներուն նշանը չտեսնեմ ու մատս բեռեռներուն տեղը չխոթեմ եւ իմ ձեռքս անոր կողը չխոթեմ՝ չեմ հաւատար»:*

Յաջորդ Կիրակի, երբ Թովմասը միւս աշակերտներուն հետ էր փակ սենեակին մէջ, Տէրը դարձեալ յայտնուեցաւ եւ բոլորին ողջունեց ըսելով. *«Խաղաղութիւն ձեզի»:* Այդ շաբթուայ ընթացքին, ոչ ոք Տիրոջը չէր տեսած, այնպէս որ ոչ ոք Անոր չէր փոխանցած Թովմասի ըսած խօսքերը: Բայց Տէրը անմիջապէս դիմեց Թովմասին ըսելով. *«Մատոյ*

հո՛ւս բեր եւ նայէ՛ իմ ձեռքերուս ու բե՛ր քու ձեռքդ ու իմ կողս խոթէ ու մի՛ ըլլար անհաւատ, հապա հաւատացեալ» (Յովի. 20:27):

Թովմաս առանց յապաղումի պատասխանեց. «*Իմ Տէրս եւ իմ Աստուածս*»: Յարութիւնը զայն վերածեց անհաւատէ հաւատացեալ մարդու: Եկեղեցական աւանդութիւնը կ'ըսէ թէ՛ ան գնաց Հնդկաստանի հարաւը, քարոզեց Աւետարանը եւ եկեղեցիներ հիմնեց:

Մեր արձագանքը

- Ի՞նչ ազդեցութիւն ունի յարութիւնը մեր վրայ: Արդեօ՞ք փոխած է մեզ:
- Մենք, որ անհաւատ էինք՝ հիմա կը հաւատա՞նք:
- Մենք, որ տրտմած էինք՝ հիմա կուրախանա՞նք Տիրոջ համար:
- Մենք, որ վախցած էինք՝ հիմա համարձա՞կ ենք Քրիստոսով:
- Մենք՝ աշակերտներս՝ նաեւ երկրպագունե՞ր ենք:
- Մենք, որ գիտենք յարութեան իմաստը՝ արդեօք ճշմարիտ եւ անվախ կը հռչակե՞նք այդ լուրը:

Տոն Սթոքմըր



Խոնարհութիւն է, երբ մարդիկ քեզ կը փառաբանեն եւ նուէրներ կուտան, սակայն դուն անձիդ արժանութիւններուն չես վերագրեր, այլ Աստուծոյ կը փառաբանես, Աստուծմէ գո՛հ կը մնաս եւ կ'ըսես. «Այս Աստուծոյ ողորմութենէն է, եւ ոչ ըստ իմ արժանաքիս», ինչպէս Սողոմոն կ'ըսէ. «Որքան ալ մեծութեան հասնիս, քեզ խոնարհ պահէ՛ եւ շնորհ եւ ողորմութիւն պիտի գտնես Աստուծոյ առաջ»:

Խոնարհութիւն է, երբ վիշտի կը հանդիպիս, եւ նեղութիւն քեզ կը հասնի, դուն չես տրտմիր, այլ Աստուծմէ գո՛հ կը մնաս. «Ըստ իմ մեղքերուս՝ ես ոչ միայն այսքան, այլեւ բազում պատիժներու արժանի եմ, եւ օրհնեալ է Աստուած, որ այս անցաւոր կեանքին մէջ եւ մահկանացու մարմնիս մէջ զիս վիշտի արժանացուց», ինչպէս առաքեալը կ'ըսէ. «Համաձայնած եմ տկարութիւններու, նախատինքներու, տառապանքներու, հալածանքներու եւ նեղութիւններու՝ Քրիստոսին համար, վասն զի երբ կը տկարանամ, այն ատեն կը զօրանամ»:

Անանիա Նարեկացի

Իր բերանը բանալով կը սորվեցնէր (3)

Մատթեոս 5-րդ գլուխ

Մաս 3. Օրէնքի կատարումը

«*Դուք էք աշխարհի յոյսը*»: Կեանքով, յոյսով եւ մեծ հեղինակությամբ ու սիրով արտասանուած խօսքերը լսելէ ետք, աշակերտները եւ հաւաքուած բազմութիւնը սկսան մտածել, թէ այս վարդապետութիւնը այնքան նոր եւ տարբեր էր այն բոլորէն, ինչ որ իրենք գիտէին: Գուցէ մտածեցին, որ Օրէնքն ու Մարգարէները պէտք է մի կողմ դրուին: Սակայն այդ միտքը շուտով փարատուեցաւ:

«*Մի՛ կարծէք թէ ես եկայ օրէնքը կամ մարգարէները ւարելու: Արեւու չեկայ, հապա՛ կատարելու: Քանզի ճշմարտապէս կ'ըսեմ ձեզի, «Մինչեւ երկինք ու երկիր անցնին, օրէնքէն յովտ մը կամ նշանագիր մը պիտի չանցնի, մինչեւ բոլորն ալ կատարուին»*»: Ինչքան բարձր դասեց Տէր Յիսուս սուրբգրութիւնը: Աստուածաշունչին մէջ ոչինչ՝ նոյնիսկ ամենափոքր նշանը՝ աննպատակ չէ: Ասիկա բոլորը ճշմարիտ է եւ պէտք է կատարուի:

Յիսուսի վարդապետութիւնը այնքան տարբեր էր աշակերտներուն՝ Օրէնքէն եւ Մարգարէներէն սորվածներէն: Հետեւաբար՝ ինչպէ՛ս կրրնար Ինքը Օրէնքի եւ Մարգարէութեան կատարողը ըլլար: Ինչպէ՛ս կրնային հաշտեցնել այս տարբերութիւնը:

Պատասխանը շուտով յայտնի դարձաւ: Աստուծոյ Խօսքին հանդէպ իրենց ըմբռնումը այնքան մակերեսային էր, եւ այնքան շատ հիմնուած միայն արտաքին դրսեւորումներու վրայ, որ բաց թողած էին անոր իսկական խորունկ իմաստն ու նպատակը: Սորված էին աւանդութեանն՝ ոչ թէ Աստուծմէ:

Իրականութեան մէջ՝ Սուրբ Գիրքը այնքան խորհուրդներ կը պարունակէ, որ ո՛չ ոք ամբողջութեամբ չէր ըմբռնած, եւ ահա՛, այդ էր որ Տէր Յիսուս եկաւ կատարելու: Միայն Ան գիտէր, որ իւրաքանչիւր պատարագ, զոր Իսրայէլը հրաման ստացած էր ընելու, մարգարէական պատկեր մըն էր՝ միակ կատարեալ պատարագին, զոր Ան պիտի ընէր՝ երբ Ինքզինք գոհէր որպէս «*Աստուծոյ Գառը*» (Յովհ. 1:29):

Միայն Տէր Յիսուս գիտէր, թէ Իր մահուան եւ յարութեան շնորհիւ, Իսրայէլի ամբողջ կրօնական համակարգը՝ տաճարը, քահանայութիւնը, տօները, պիտի իրականանային Իր մէջ: Բայց այդ բոլորը տակաւին պետք է բացայայտուէին: Իսկ մինչ այդ, աշակերտները պետք է հասկնային՝ որ Օրէնքը չեն ըմբռնած:

«Քանզի կ'ըսեմ ձեզի, Եթէ ձեր արդարութիւնը դպիրներուն ու փարիսեցիներուն արդարութենէն ավելի չլլայ, բնաւ պիտի չմտնէք երկնքի թագաւորութիւնը»:

Դպիրներու եւ փարիսեցիներու ուսմունքէն եւ օրինակէն մարդկանց սորվածները երբեք զանոնք Աստուծոյ գործին եւ նպատակի մաս չեն դարձուցած: Ասիկա Աստուծոյ ճամբան չէր, ոչ ալ այն ճամբան, որու վրայ Տէրը ուզած էր Իր աշակերտներուն առաջնորդել:

Տէրը այստեղ չի խօսիր մեր հաշուին վերագրուած արդարութեան մասին, զոր ստացած ենք հաւատքով: Ո՛չ, Ան խօսեցաւ արդար կեանքի, սովորութիւններու, բարքերու եւ Իր աշակերտներու խօսակցութեան մասին: Անոնց արդարութիւնը պետք է գերազանցէր դպիրներու եւ փարիսեցիներու կեղծ արդարութեանը: Իր աշակերտները երբեք պետք չէ նմանուէին «... ծեփած գերեզմաններու, որոնք դուրսէն գեղեցիկ կ'երեւնան, բայց ներսէն մեռելներու ոսկորներով եւ ամէն կերպ պրոծոյթիւնով լեցուն են» (Մատթ. 23:27):

Աստուծոյ Օրէնքին հանդէպ իրենց ըմբռնումը ամբողջովին պետք էր փոխուէր: Եւ Տէրը սկսաւ սորվեցնել զանոնք, թէ Օրէնքը կը վերաբերի ոչ միայն իրենց գործերուն, այլ՝ իրենց անձերուն: Մարդը կը նայի արտաքինին, սակայն Տէրը կը նայի սրտին (Ա Թագ. 16:7): Ասիկա դաս մըն է, զոր մենք բոլորս պետք է սորվինք:

Նէյլ Պուրման



Նամակի մը գորութիւնը

Մեծամասնութիւնս գիտենք Ճան Ուէյնին, որպէս դերասան: Սակայն չէք գիտեր թէ ինչ եղաւ իրեն, մահանալէն առաջ: Ահա այդ պատմութիւնը:

Ռօպըրթ Շուլըրին աղջիկը՝ Սինտին, մօթորսայլքըով արկած մը ունեցաւ եւ ոտքը պէտք էր անդամահատէին: Ճան Ուէյն շատ կը սիրէր քարոզիչ Ռօպըրթ Շուլըրը, ուստի նամակ մը գրեց արկածեալին ըսելով. «Սիրելի՛ Սինտի, շատ կը ցաւիմ ունեցած արկածիդ մասին: Կը յուսամ որ լաւ պիտի ըլլաս»: Ստորագրուած՝ Ճան Ուէյն:

Երկտողը յանձնուեցաւ Սինտին եւ ան որոշեց պատասխանել հետեւեալ ձեւով. «Սիրելի՛ պարոն Ուէյն, ստացայ նամակդ: Շնորհակալ եմ որ գրեցիք ինծի: Ես ձեզ շատ կը սիրեմ: Լաւ պիտի ըլլամ, քանի որ Յիսուս պիտի օգնէ ինծի: Պարոն Ուէյն, դուք Յիսուսը կը ճանչնա՞ք: Կը յուսամ որ գիտէք Յիսուսը, քանի որ չեմ կրնար երեւակայել թէ երկինքը կատարեալ պիտի ըլլայ առանց Ճան Ուէյնի: Եթէ Յիսուսը տակաւին չես հրաւիրած սրտիդ մէջ, կը յուսամ որ ճիշդ հիմա ընդունիս զայն որպէս Փրկիչ եւ Տէր: Երկինքը կը տեսնուի՞նք»: Հազիւ նամակը ծրարին մէջ դրաւ, այցելու մտաւ սենեակը:

«Ի՞նչ կ'ընես» հարցուց ան: Սինտին պատասխանեց թէ նամակ մը գրած էր Ճան Ուէյնին, բայց չէր գիտեր ինչպէս անոր դրկել զայն: Այցելուն ըսաւ. «Ի՞նչ զարմանալի է, որ այս գիշեր Ճան Ուէյնօին հետ ընթրիք պիտի ունենամ Նյու Փորթ Պիչին մէջ, նամակը ինծի տուր եւ ես այն իրեն կը յանձնեմ»: Սինտի ուրախութեամբ տուաւ գրութիւնը եւ մարդը զայն բաճկոնին գրպանը դրաւ:

Տասներկու հոգիներ սեղանի մը շուրջ նստան այդ գիշեր: Անոնք կ'ուտէին եւ կը զուարճանային: Երբ մարդը ձեռքը գրպանը նետեց, նամակը զգալով յիշեց զայն: Ճան Ուէյն սեղանին ծայրը նստած էր: Մարդը նամակը հանեց եւ ըսաւ. «Այսօր Շուլըրին աղջկան սենեակն էի եւ ան քեզի նամակ մը գրեց եւ ուզեց որ յանձնեմ: Ահաւասիկ նամակը»: Եւ զայն փոխանցեց դերասանին: Մարդիկը շարունակեցին խնդալ ու զուարճանալ: Երբ մէկը պատահմամբ Ճան Ույնին կողմ

նայեցաւ, տեսաւ թէ ան կ'արտասուէր: Անոնցմէ մին ըսաւ. «Ի՞նչ պատահեցաւ»: Ան ցած ձայնով ըսաւ. «Կ'ուզեմ այս նամակը կարդալ ձեզի»: Եւ կարդաց գրութիւնը ու սկսաւ լալ: Ծալլեց թուղթը, գրպանը դրաւ եւ զայն իրեն բերող մարդուն դարձաւ եւ ըսաւ. «Գնա՛ այդ պրզ-տիկ աղջկան ըսէ, որ ճիշտ հիմա, այս ճաշարանին մէջ, Ճան Ուէյն իր սիրտը Յիսուսի տուաւ եւ զինք պիտի տեսնէ երկինքը»:

Երեք շաբաթներ վերջ Ճան Ուէյն մահացաւ: Երբեք պիտի չգիտնաս թէ մէկու մը ըրած վկայութիւնդ ինչպիսի յաւիտենական ազդեցութիւն պիտի ունենայ:

«Յարմարութեամբ ըսուած խօսքը արծաթէ զարդերու մէջ դրուած ոսկիէ խնձորներու կը նմանի» (Առակ. 25:11):

«Խօսքը քարոզէ մտադրութեամբ... ատենին ու ատենէն դուրս.... անտարանիշ գործ գործէ» (Բ Տիմ. 4:2, 8):

Քաղուած՝ «Աւետաբեր ձիթենին» գրքէն



Լուրեր Վրաստանէն

«Այն ատեն ըսաւ իր աշակերտներուն. «Հունձքը շատ է, բայց մշակները՝ քիչ, ուստի հունձքին Տէրոջը աղաչեցէք, որ մշակներ հանէ իր հունձքին»» (Մատթ. 9:37-38):

Այս տարուան Մարտ ամսուն Հայաստան կատարած այցս մեծ քաջալերանք ու օրհնութիւն եղաւ ինծի համար: Մեր ծառայակիցները կը շարունակեն իրենց մասնակցութիւնը բերել ծառայութեան զանազան ոլորտներուն՝ ներառեալ կարիքաւոր ընտանիքներու աջակցութիւնը, Սուրբ Գրոց կանոնաւոր ուսումնասիրութիւնը եւ մանուկներու ծառայութիւնը:

Տէրը այս տարի եւս մեր սրտերուն վրայ դրեց Վրաստան այցելելու բեռը: Մարտունը, Աշոտը եւ Վարդանը կազմեցին թիմին մէկ մասը,

եւ մենք պատիւ ունեցանք հանգստեան օրերը անցընել «Գթութիւն» Մկրտական եկեղեցւոյ առաջնորդներուն հետ:

Մեր աչքերը բաց են հայկական սփիւռքի կարիքներուն վրայ՝ թէ՛ հոգեւոր եւ թէ՛ նիւթական: Անցեալ տարի այցելեցինք հեռաւոր Սամ-շիվիժէ գիւղը, ուր բնակչութեան 99 տոկոսը հայեր են: Մեր վիրահայ եղբայրները շատ փափաքեցան, որ եւս մէկ նման գիւղ այցելենք՝ գրեթէ մոռցուած հայկական Սապաղոն, որ կը գտնուի հեռաւոր Կախեն-թի շրջանին մէջ, Ազրպէյճանի սահմանին մօտ:

Սապաղոն կը գտնուի Թիֆլիսէն մօտաւորապէս 200 քմ հեռաւորութեան վրայ: Մկրտական եկեղեցւոյ առաջնորդները մեզի պատմեցին այս փոքր համայնքին պատմութիւնը, որ գաղթած է Արցախէն աւելի քան 100 տարի առաջ, անցած է Արաքս գետը՝ որ կը բաժնէ Վրաստանն ու Ազրպէյճանը, եւ որ Կովկասի ամենաերկար գետերէն մէկն է՝ հոսելով նաեւ Թուրքիոյ, Հայաստանի եւ Իրանի տարածքով: Այս տեղահանուած հայկական խումբը մինչ օրս կը բնակի հոն՝ համեստ պայմաններու մէջ: Միայն Աստուծոյ շնորհքով տակաւին այնտեղ են, թէպէտեւ անոնց թիւը կը նուազի:

Ծաբաթ օր եկեղեցւոյ առաջնորդներուն հետ ճամբայ ելանք դէպի հեռաւոր Սապաղոն՝ ոլորապտոյտ եւ դժուար ճանապարհով: Ծանօթացանք համայնքին, այցելեցինք որոշ անձեր, որոնք բժշկական օգնութեան կարիք ունէին: Երեկոյեան՝ տեղւոյն ծառայութեան փոքր սրահին մէջ հանդիպում ունեցանք համայնքին հետ, ուր Աշոտը քարոզեց եւ քաջալերեց ժողովուրդը:

Գեւորգ անունով երիտասարդ մը աշխուժօրէն կ'օգնէ այս փոքրիկ համայնքին, եւ եկեղեցին ներկայիս կը քննարկէ անոր ձեռնադրութեան հարցը:

Հեռաւորութեան եւ նիւթաթելանիկական դժուարութիւններուն պատճառով, այսպիսի հանդիպումները շաբաթական կերպով չեն իրականացուիր:

Մեր Տէրը յստակ հրահանգ տուած է՝ *«սղաշեցէ՛ք, որ մշակներ հանէ իր հունձքին»*:

ACM-ի մէջ Տէրը դպաւ մեր սրտերուն՝ ոչ միայն աղօթելու, այլ լիւ այցելելու եւ օժանդակելու այս համայնքներու հոգեւոր եւ նիւթական կարիքներուն:

ACM-ը իր հիմնադրումէն ի վեր աջակցութիւն ցոյց կու տայ կարիքաւոր ընտանիքներուն, եւ մեր փափաքն է տեղական եկեղեցւոյ միջոցով աջակցել այս երկու գիւղերուն:

Աստուծոյ շնորհքով՝ 2025-ի Ապրիլէն սկսեալ վեց ամիս է, որ օգնութիւն կը տրամադրենք: Աղօթքներուն եւ զոհաբերութիւններուն կողքին, մենք կը փափաքինք, որ հոգեւոր մշակ մը առաջնորդէ այս համայնքները՝ Տիրոջ հետ քայլելու եւ հաւատարմութեամբ Աւետարանը հռչակելու:

Տէրը ըսած է՝ «Հունձքը շատ է» - այս իրականութիւնը տակաւին այսօր ալ կը մնայ: Մենք կը յիշենք մշակներու համար աղօթելու պատուէրը եւ կը գիտակցինք, թէ անոնք ինչքան կարեւոր են: Որպէս կազմակերպութիւն եւ որպէս եկեղեցիի ճիւղ, մենք պիտի շարունակենք փնտռել մեր Տիրոջ երեսը:

Շարունակեցէ՛ք աղօթել ACM-ի թիւին համար, որովհետեւ սեպտեմբերին նախատեսուած է եւս մէկ այց Վրաստան՝ միսիոներական խումբի Հայաստան այցելութենէն առաջ:

Տօթք.՝ Դանիէլ Ծէյմս